



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am , www.y-su.am

№ 014 «26» դեկտեմբերի 2019 թ.

### Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

#### «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2019 թ. դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած թիվ 14 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 28-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում օրակարգային 8 հարցով տեղի ունեցավ Խորհրդի թիվ 14 նիստը: Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց հրավերն ընդունելու համար: Նիստի սկզբում Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը տեղեկացրեց, որ Խորհրդի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ և այլևս Խորհրդի անդամներ չեն Արթուր Իսրայելյանը, Սոսե Ղազարյանը ու Աստղիկ Մնացականյանը և շնորհակալություն հայտնեց նրանց համատեղ աշխատանքի համար: Այնուհետև Գևորգ Մուրադյանը ներկայացրեց Խորհրդի երեք նոր անդամներ Գրիգոր Հայրապետյանին, Շուրի Հակոբյանին և Աստղիկ Վարդուհանին՝ մաղթելով նրանց բովանդակալից և օգտակար համատեղ աշխատանք ԵՊՀ-ի համար:

Մինչև օրակարգի հաստատմանն անցնելը Խորհրդի նախագահը ցանկացավ անդրադառնալ երկու հարցի: **Առաջին հարցը** վերաբերում էր ԵՊՀ ռեկտորի ընտրությունների հայտարարությանը: Գևորգ Մուրադյանը նշեց, որ ԿԳՄՄՆ-ի կողմից շրջանառության մեջ դրված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ակնկալվում էր, որ պետք է դեկտեմբեր ամսին հաստատվի Ազգային Ժողովի կողմից: Այդ պարագայում ներկայիս Խորհուրդը պետք է լուծարվեր: Արդյունքում ստացվելու էր մի իրավիճակ, երբ գործող Խորհուրդը հայտարարում է մրցույթ և չի հասցնում անցկացնել մրցույթը կամ մրցույթի անցկացման դեպքում ռեկտորը պետք է աշխատեր նոր Խորհրդի հետ: Սա էր պատճառը, որ մինչև այժմ ԵՊՀ ռեկտորի ընտրությունների հայտարարությունը երկարաձգվել է: Երկրորդ պատճառն էր ԵՊՀ-ում տիրող էմոցիոնալ վիճակն էր և անհրաժեշտություն կար, որպեսզի այդ վիճակը հանդարտվի: Գևորգ Մուրադյանը նշեց, որ այս պահին Խորհուրդը պատրաստ է ԵՊՀ ռեկտորի ընտրություններին և պարզաբանեց, թե ինչու այդ հարցը ներառված չէ ընթացիկ նիստի օրակարգում: Պարզաբանումը վերաբերում էր ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգում առկա որոշակի կետերին, որոնք կամ հնացած են կամ խնդրահարույց:

Ամփոփելով այս հարցը՝ Գևորգ Մուրադյանը նշեց, որ կարծում է 2020թ. հունվարի վերջին կհայտարարվի ԵՊՀ ռեկտորի ընտրությունների մրցույթը և արդեն մարտ ամսին կունենանք նոր ընտրված ռեկտոր: **Երկրորդ հարցը** վերաբերում էր ս.թ. դեկտեմբերի 24-ին ԵՊՀ-ում ուստիկանության գործելաճին: Գևորգ Մուրադյանն անընդունելի համարեց ուստիկանության գործելաճը ԵՊՀ-ում և նշեց, որ օրակարգը ուղարկելիս այդ հարցը չկար և առաջարկեց հարցն ավելացնել օրակարգում: Խորհուրդը միաձայն ընդունեց նախագահի առաջարկությունը:

Գևորգ Մուրադյանը հարցրեց խորհրդի անդամներին, թե կան արդյոք այլ առաջարկություններ օրակարգի հետ կապված: Խորհրդի անդամ Հովհաննես Հովհաննիսյանը նշեց, որ չնայած իրենք ստացել են օրակարգը, սակայն դրա երկրորդ կետում ներառված կառուցվածքային փոփոխությունների առաջարկները, որոնք կապված են կենտրոնների ստեղծման հետ չունեն համապատասխան հիմնավորումներ, թե որն է կենտրոնի նպատակը, որքան է լինելու աշխատողների թվաքանակը, ֆունկցիաները և այլն: Հովհաննես Հովհաննիսյանն առաջարկեց կառուցվածքային փոփոխությունների հարցը հանել օրակարգից, քանի որ խորհրդի անդամները չեն ստացել դրանց վերաբերյալ հիմնավորումներ և չգիտեն, թե ինչ են քննարկելու: Հովհաննես Հովհաննիսյանի առաջարկության վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը՝ նշելով որ այդ կենտրոններից մեկի համար արդեն ԵՊՀ-ն ստացել է դրամաշնորհ, իսկ մյուս կենտրոնների հիմնավորումները կարող են ներկայացնել դրանց ղեկավարները: Գևորգ Մուրադյանն առաջարկեց հարցը թողնել օրակարգում և եթե ներկայացման ընթացքում հիմնավորումները չբավարարեն, ապա Խորհրդի անդամները կարող են դեմ քվեարկել: Հովհաննես Հովհաննիսյանը նշեց, որ հիմա բերվում են որոշակի հիմնավորումներ, ինչը խորհրդի անդամները չեն ստացել և լավ կլիներ, որ այդ բոլոր հիմնավորումները վաղօրոք ներկայացվեին: Խորհրդի անդամ Դավիթ Ափոյանը նշեց, որ հարցը քննարկվել է գիտխորհրդում և իր կարծիքով կառուցվածքային փոփոխությունների հարցը հիմնավորված է և եթե Հովհաննես Հովհաննիսյանը ցանկանում էր հիմնավորումներ ստանալ, կարող էր էլեկտրոնային փոստով դիմել Խորհրդին և ստանալ հիմնավորումները: Ի պատասխան Հովհաննես Հովհաննիսյանը նշեց, որ ինքը՝ որպես Հոգաբարձուների խորհրդի անդամ, շատ լավ գիտի իր գործառույթները, և չպետք է խնդրի այդ հիմնավորումները, այլ մյուս անդամների հետ պետք է ժամանակին և պատշաճ ձևով ստանա դրանք: Ծագած քննարկումների ժամանակ Դավիթ Ափոյանը նշեց, որ եթե Հովհաննես Հովհաննիսյանն առաջարկեց հարցը հանել օրակարգից, ապա նա ցանկանում է լսել Գեղամ Գևորգյանին, թե ինչու հարցը պետք է լինի օրակարգում: Գեղամ Գևորգյանը խնդրեց լսել իր հիմնավորումները, քանի որ հետաձգելով հարցը՝ հարվածի տակ են դրվում որոշ նախաձեռնություններ: Քվեարկության արդյունքում որոշվեց հարցը թողնել օրակարգում:

Դավիթ Ափոյանը նշեց, որ ինքը մտահոգություն ունի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հարցի հետ կապված: Նա ավելացրեց, որ ընդունում է Խորհրդի նախագահի հիմնավորումները և ըմբռնումով է մոտենում դրանց, բայց մինևույն ժամանակ առաջարկեց օրակարգում, այնուամենայնիվ, ներառել ռեկտորի ընտրության վերաբերյալ քննարկման հարցը և տեղում լուծել կանոնակարգի հետ կապված տեխնիկական խնդիրներն ու մրցույթ հայտարարել՝ պնդելով, որ ռեկտորի ընտրությունն օրհասական է բուհի համար, քանի որ շուտով պետք է կազմվի զարգացման ռազմավարական նոր ծրագիրը, որը կարող է իրագործել մանդատ և համապատասխան ծրագիր ունեցող ռեկտորը: Խորհրդի նախագահն արձագանքեց, որ համաձայն է, որ այս պահին արդեն ԵՊՀ-ում պետք է անցնել ռեկտորի ընտրությունների կազմակերպմանը, սակայն պետք է տանել

նախապատրաստական աշխատանքներ, որպեսզի որևէ բացթողում չլինի իրավական տեսանկյունից և հետագայում դա հիմք հանդիսանա բողոքարկման համար: Այդ պատճառով Խորհրդի նախագահը առաջարկեց ռեկտորի ընտրությունների հարցը այս պահին չներառել օրակարգում՝ խոստանալով որ 2020թ. հունվարի 22-30 ընկած ժամանակահատվածում կիրավիրվի Խորհրդի հերթական նիստը և արդեն այդ հարցի պատասխանը հստակ կլինի: Խորհրդի անդամ Արթուր Վաղարշյանն առաջարկեց այսօր ստեղծել հանձնախումբ, որը կուսումնասիրի ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգը և կներկայացնի եզրակացություն, ըստ որի՝ Խորհուրդը կորոշի՝ հայտարարել լ մրցույթ, թե՛ ոչ: Խորհրդի նախագահը ներկայացրեց, որ տեխնիկական, բովանդակային և ժամանակային խնդիրները կարող են ավելի մեծ խոչընդոտներ առաջացնել և այդ պատճառով կրկին առաջարկեց հարցը տեղափոխել 2020թ. հունվարի վերջ: Լսելով Խորհրդի նախագահի հիմնավորումները՝ Արթուր Վաղարշյանն իր առաջարկությունը վերաձևակերպեց հետևյալ կերպ՝ ստեղծել հանձնախումբ կանոնակարգը վերամշակելու համար: Դավիթ Ափոյանը խնդրեց ռեկտորի ընտրության հարցը ներառել օրակարգում և քվեարկությամբ որոշել այդ հարցի ճակատագիրը: Քվեարկության արդյունքում Խորհուրդը մերժեց Դավիթ Ափոյանի առաջարկը և ընդունեց Արթուր Վաղարշյանի առաջարկը: Արդյունքում օրակարգում ավելացավ ևս մեկ հարց: Խորհրդի նախագահը քվեարկության դրեց նիստի օրակարգը. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 նիստի օրակարգը ընդունվեց հետևյալ հարցերով.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն,
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային փոփոխություններ:
  - Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ստեղծել «Ամերիկյան հետազոտությունների կենտրոն»:
  - Երևանի պետական համալսարանում ստեղծել «Երևանի պետական համալսարանի լեզուների դասավանդման և թեստավորման կենտրոն»:
  - Երևանի պետական համալսարանում ստեղծել «Երևանի պետական համալսարանի բիզնես դպրոց»
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունում փոփոխություններ:
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2020թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2020թ. հաստիքացուցակի հաստատում:
6. Ս.թ. դեկտեմբերի 24-ին ԵՊՀ-ում ռստիկանության գործելառձի քննարկում:
7. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգը վերամշակելու համար հանձնախմբի ստեղծում:
8. Ընթացիկ հարցեր:

1. **Նիստի օրակարգի առաջին հարցը վերաբերում էր «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրությանը:** Խորհրդի նախագահը նշեց, որ Խորհրդի նախկին քարտուղար Արթուր Իսրայելյանը նշանակվել է ԵՊՀ պրոռեկտոր և այսօր պետք է կայանա Խորհրդի նոր քարտուղարի ընտրություն և առաջարկեց Խորհրդի անդամ Գրիգոր Հայրապետյանի թեկնածությունը:

Գրիգոր Հայրապետյանը հակիրճ ներկայացրեց իրեն և իր գործունեությունը ԵՊՀ-ում: Գրիգոր Հայրապետյանի թեկնածության առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ԵՊՀ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյանին:

**2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային փոփոխություններ:** Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը խնդրեց Գեղամ Գևորգյանին ներկայացնել հարցը՝ նշելով որ այս պահին կա երեք կենտրոնների բացման հարց և յուրաքանչյուր կենտրոնի հարցը քվեարկության է դրվելու առանձին-առանձին:

Գեղամ Գևորգյանը, նախևառաջ ներկայացրեց Միջազգային հարաբերությունների ֆակուլտետին կից «Ամերիկյան հետազոտությունների կենտրոն» ստեղծելու հարցը՝ փաստելով, որ նախագիծը բավականին խոշոր ծրագիր է երեք տարի ժամանակահատվածով և 490 հազար ԱՄՆ դոլար բյուջեով: Ավելին, սա արտասահմանյան դրամաշնորհային այնպիսի բացառիկ ծրագիր է, որտեղ ԵՊՀ կողմից համաֆինանսավորում չի լինելու, իսկ հետազոտությունները կատարվելու են Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ստեղծվող այս կենտրոնում: Ծավալվեց քննարկում և Գեղամ Գևորգյանը նշեց, որ ծրագրով զբաղվում են Ալեքսանդր Մարգարովը և Վահագն Ագյանը: Ալեքսանդր Մարգարովը գտնվում է գործուղման մեջ այդ պատճառով չի կարող ներկայացնել կենտրոնը և պատասխանել հարցերին, իսկ Վահագն Ագյանը չի հրավիրվել: Խորհրդի անդամ Հովհաննես Հովհաննիսյանը հարցրեց, թե արդյոք այստեղ խոսքը գնում է Արիզոնայի համալսարանի Մելիքյան կենտրոնի մասին և գումարը, որի մասին նշվեց, պետական գումար է, թե Մելիքյան կենտրոնի գումարն է: Գեղամ Գևորգյանը նշեց, որ դա պետական գումար է, ինչը փոխանցվելու է Մելիքյան կենտրոնի միջոցով: Այնուհետև Հովհաննես Հովհաննիսյանը հարցրեց, թե արդյոք այդ ծրագիրն առկա է ամբողջական փաթեթով, այսինքն՝ կան հստակ գրված ուղղությունները, բյուջեի բաշխումը, աշխատողների թվաքանակը և այլն: Գեղամ Գևորգյանը պատասխանեց, որ 2020թ. հունվարի 11-ին Ալեքսանդր Մարգարովի և Վահագն Ագյանի հետ մեկնելու է ԱՄՆ բոլոր մանրամասները քննարկելու և պայմանագիրը ստորագրելու համար: Խորհրդի անդամ Հայկակ Արշամյանը հարցրեց, արդյոք շատ ավելի ճիշտ չէր լինի, եթե այդ պայմանավորվածությունները նախօրոք ձեռք բերվեին հետո նոր կենտրոնը բացվեր: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ մենք բացում ենք մի կենտրոն, որը ոչ մի իրավական հիմք չունի: Չկա ծրագիր, չկա բյուջե, չկա պայմանագիր նշեց Հայկակ Արշամյանը: Գեղամ Գևորգյանը պատասխանեց, որ մենք բացում ենք ԵՊՀ կենտրոն, որի բացման համար, որևէ պայմանագիր արտասահմանյան գործընկերոջ հետ անհրաժեշտ չէ: Այսինքն՝ մենք կարող ենք բացել կենտրոն և ֆինանսավորենք մենք ինքներս: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը հարցրեց Գեղամ Գևորգյանին, թե արդյոք այստեղ խոսքը վերաբերում է նրան, որ իրավական տեսանկյունից, որպեսզի մենք կարողանանք մասնակցել այս դրամաշնորհային ծրագրին, ապա պետք է ունենանք այդ կենտրոնը: Գեղամ Գևորգյանը պատասխանեց. «այո»: Այնուհետև Խորհրդի նախագահը հարցրեց Գեղամ Գևորգյանին, թե կա մոտավոր

Ժամանակացույց ստորագրման գործընթացի հետ կապված, ինչին ի պատասխան Գեղամ Գևորգյանը նշեց 2020թ. հունվարի 11-ը: Հայկակ Արշամյանն արձագանքեց, որ դա շատ անտրամաբանական է իսկ եթե դա ծրագրի պահանջն է, ապա շատ անտրամաբանական պահանջ է, քանի որ, եթե ինչ-որ բան պետք է ֆինանսավորվի, ապա ֆինանսը պետք է լինի հետո նոր կենտրոնը բացվի: Այսինքն, եթե պայմանագիրը չկնքվի հետո մենք նորից պետք է որոշում կայացնենք այդ կենտրոնը փակելու: Ինչին ի պատասխան Գեղամ Գևորգյանը պատասխանեց, որ կենտրոնը բացվում է առանց ԵՊՀ ֆինանսավորման: Հայկակ Արշամյանն ավելացրեց, որ ծրագիր սկսելու և իրականացնելու գործընթացն այդպես չի լինում: Ծավալված քննարկումից հետո Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը ասաց, որ Վահագն Ազյանը չի կարողանալու ներկա գտնվել, որպեսզի պատասխանի հարցերին և առաջարկեց ԵՊՀ-ում Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի ստեղծման հարցը դնել քվեարկության. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2 ձայների հարաբերակցությամբ Խորհուրդը հաստատեց գիտխորհրդի N6/4.3 որոշումը:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 14.11.2019թ. 6/4.3 որոշումը Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ստեղծել «Ամերիկյան հետազոտությունների կենտրոն»:

ԵՊՀ լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն ստեղծելու առաջարկությունը ներկայացնելիս Գեղամ Գևորգյանը նշեց, որ կենտրոնում ոչ միայն դասավանդվելու, այլև մշակվելու են լեզուների ուսուցման և թեստավորման մեթոդներ: Կենտրոնը լինելու է ամբողջովին ինքնաֆինանսավորվող ստորաբաժանում և որոշակի գումար ստանալու է ԵՊՀ-ն ծառայությունների դիմաց (տարածք, էլեկտրաէներգիայի ծախս և այլն): Կենտրոնի հեռահար նպատակն է հանդիսանում լեզուների դասավանդումը հանել դասացուցակից, բայց թողնել պարտադիր որպես կրթական մոդուլ և անկախ ֆակուլտետից ուսանողն իր գիտելիքներին համապատասխան պետք է ստանա համապատասխան որակավորում: Մեկ անգամ դա լինելու է անվճար, իսկ մյուս դեպքերում վճարովի: Ծառայությունը մատուցվելու է ինչպես ԵՊՀ ուսանողներին, այնպես էլ ՀՀ քաղաքացիներին: Կենտրոնի ղեկավարը լինելու է Մարգարիտա Ապրեսյանը: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը խնդրեց Մարգարիտա Ապրեսյանի առավել մանրամասն ներկայացնել, քանի որ իր մոտ որոշակի հարցեր առաջացան: Օրինակ, եթե ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողը ցանկանում է սովորել արաբերեն, արդյոք դա կազմակերպվելու է այս կենտրոնի միջոցով, թե ուսանողի համար դա պետք է կազմակերպվի արևելագիտության ֆակուլտետում: Մարգարիտա Ապրեսյանը պատասխանեց, որ այս գաղափարը նոր չէ և այն մշակվել է մոտ 10 տարի առաջ և ունի հիմնավորում, ինչը նա մի քանի տարի առաջ ներկայացրել է նաև Կրթության և գիտության նախարարություն: Այս կենտրոնում նախնաառաջ դասավանդվելու է հայոց լեզու արտասահմանից ժամանած մասնագետների և սփյուռքահայերի համար, ինչպես նաև եվրոպական և արևելյան լեզուներ: Բազմաթիվ ԲՈՒՀ-եր արդեն իսկ ունեն լեզուների իրենց ուսուցման կենտրոնները: Կենտրոն փորձելու ենք ներգրավել լավագույն մասնագետներին, որպեսզի կարողանանք օտար լեզուներով զինենք մեր գիտական ներուժը: Կենտրոնը մատուցելու է ծառայություններ ինչպես սկսնակների, այնպես էլ կառավարության աշխատողների համար: Խորհրդի անդամ Բաբկեն Հովհաննիսյանը հարցրեց, եթե առաջին

կուրսի ուսանողն անցնելու է հայոց լեզու, ապա նա դա պետք է անցնի այդ կենտրոնում, թե ոչ: Ինչին ի պատասխան Գեղամ Գևորգյանը պատասխանեց հիմա չէ, այլ տարիներ հետո: Խորհրդի անդամ Հովհաննես Հովհաննիսյանը նշեց, որ լեզուների կենտրոններ ստեղծելը վատ գաղափար չէ, բայց ամբողջ աշխարհում ընդունված է «Extension» հասկացությունը, որի շրջանակներում ոչ միայն լեզուներ, այլ տարբեր առարկաներ է առաջակվում հանրությանը գումարի դիմաց և դա նորմալ պրակտիկա է: Վերադառնալով Գևորգ Մուրադյանի հարցադրմանը՝ ինձ համար նույնպես հասկանալի չէ հատման կետը, օրինակ՝ արաբագիտության ամբիոնի և լեզվի կենտրոնի հատման կետը որտեղ է և արդյոք չենք վնասի արաբագիտության ամբիոնին կամ մեկ այլ լեզվի ամբիոնին: Այստեղ կան խնդիրներ, չնայած լավ գաղափար է, բայց պետք է հասկանալ և տեսնել հատման կետերը: Կենտրոնի ստեղծման, դրա գործունեության, գործառույթների և հեռանկարների վերաբերյալ հնչեցին բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանեցին կամ որոնց վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Մարգարիտա Ապրեսյանը և Գեղամ Գևորգյանը: Քննարկումների ժամանակ Խորհրդի անդամ Ռուբեն Կարապետյանն առաջարկեց, այնուամենայնիվ, ստանալ հիմնավորումներ, հետո նոր միայն հաստատել կենտրոնների ստեղծման առաջարկությունները, քանի որ Խորհրդի անդամները լիարժեք չեն տիրապետում տեղեկատվությանը և միայն գիտխորհրդի որոշումները հաստատելու համար չեն հավաքվել և առաջարկեց մյուս երկու կենտրոնների ստեղծման հարցերը հետաձգել: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը պատասխանեց, որ տեխնիկապես առաջարկությունը հնարավոր չէ ընդունել: Խորհրդի անդամ Սմբատ Գոգյանը նշեց, որ համաձայն է Ռուբեն Կարապետյանի կարծիքի հետ և ամեն ինչը միջազգայնացման տակ ձևակերպել չի կարելի: Այս դեպքում շատ մեծ ռիսկ է տեսնում, եթե կենտրոնի ստեղծման որոշումը հիմա հաստատվում է, ապա կենտրոնի կանոնադրության հետ արդեն մենք առնչություն չենք ունենալու: Այստեղ խոսվեց բազմամակարդակ գնահատման համակարգի մասին, իսկ հայոց լեզուն չունի բազմամակարդակ գնահատման համակարգ: Հնարավոր է, որ այս դեպքում անհրաժեշտ լինի նաև Լեզվի Կոմիտեի կարծիքը: Սա շատ կարևոր հանգամանք է և այստեղ շտապել պետք չէ: Կրկին ծավալվեց քննարկումներ, հնչեցին կարծիքներ ու հարցադրումներ: Մինչև հարցը քվեարկության դնելը Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը նշեց, որ կա մեկ տեխնիկական հարց, որի պատասխանն իրեն անհրաժեշտ է: Գիտխորհրդից եկած որոշման մեջ (ՈՐՈՇՈՒՄ N6/4.2), որը ինքը ստիպված է լինելու դնել քվեարկության նշված է, ոչ թե «լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն», այլ՝ «լեզուների դասավանդման և թեստավորման կենտրոն»: Ի պատասխան Խորհրդի նախագահի հարցադրման նշվեց, որ գիտխորհուրդում հարցը քննարկվել է որպես «լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն»: Պարզաբանումը ստանալուց հետո Խորհրդի նախագահը ԵՊՀ-ում լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոնի ստեղծման հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 12:

## Որոշվեց.

1. Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 14.11.2019թ. 6/4.2 որոշումը՝ Երևանի պետական համալսարանում ստեղծել «Երևանի պետական համալսարանի լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն»:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային փոփոխություններին վերաբերող հաջորդ հարցը՝ Երևանի պետական համալսարանում ստեղծել «Երևանի պետական համալսարանի բիզնես դպրոց», Գեղամ Գևորգյանը խնդրեց, որպեսզի ներկայացնի ԵՊՀ Ճշգրիտ և բնագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը: Ռաֆայել Բարխուդարյանը ներկայացրեց ԵՊՀ բիզնես դպրոցի ստեղծման նախաձեռնությունը՝ նշելով, որ դպրոցը վճարովի հիմունքներով իրականացնելու է 3 հիմնական ծրագիր. «Բիզնես դպրոցում իրականացվելու է խորհրդատվություն գործարարների համար, նախատեսվում է մագիստրոսական ծրագրերի իրականացում, ինչպես նաև կարճաժամկետ դասընթացների անցկացում»: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը նկատեց, որ բիզնես դպրոցը գլոբալ առումով խորհրդատվական ֆունկցիա չի ունենում և դրանց հիման վրա բացում են «Think Tank»-եր, որոնք կարող են կամ տրամադրել խորհրդատվության կամ ոչ: Ավելին, որպեսզի մենք հասկանանք, որ կարող ենք գնալ բիզնես խորհրդատվության ոլորտ, դրա համար պետք է հասկանալ, թե ինչ դասախոսական կամ կադրային բազա ունենք մենք: Գևորգ Մուրադյանը նաև նշեց, որ Ռաֆայել Բարխուդարյանի կողմից ներկայացված երրորդ կետն իրականում իրենից ներկայացնում է «Extenison» ծրագրեր և արդյոք նպատակահարմար է բիզնես դպրոցի շրջանակներում ունենալ այդպիսի ծրագրեր: Ռաֆայել Բարխուդարյանը պատասխանեց, որ բիզնես դպրոցի հիմնական գաղափարն այն է, որ այստեղ ներգրավվելու են բիզնեսում կայացած դասախոսական կազմի ներկայացուցիչներ: Այսինքն՝ սա լինելու է ոչ թե զուտ ակադեմիական դասախոսական կազմով կազմակերպված ծրագրերի ուսուցում, այլ այստեղ պետք է լինեն նաև բիզնեսից ներգրավված դասախոսական կազմի ներկայացուցիչներ: Խորհրդատվությունը չի դիտարկվում որպես հիմնական գործառույթ այլ լինելու է երկրորդական: Գևորգ Մուրադյանը կրկին որոշակի պարզաբանումներ ներկայացրեց կապված բիզնես դպրոցի և դրա գործունեության հետ և հավելեց, որ շատ կարևոր է ծրագրի ղեկավարը: Արդյոք մենք ունենք որոշակի թեկնածուներ, որոնց հետ մենք բանակցում ենք և ովքեր պատրաստ են այդ ծրագիրը կյանքի կոչել: Ռաֆայել Բարխուդարյանը համաձայնեց, որ ծրագրում պետք է ներառվեն շատ փորձառու մասնագետներ և այդ կան թեկնածուներ, ովքեր պետք է ղեկավարեն բիզնես դպրոցը: Ռաֆայել Բարխուդարյանը որպես օրինակ բերեց Գերմանյան Վահրամի և Գևորգյան Ռուբենի թեկնածությունները՝ նշելով որ վերջնական ոչինչ որոշված չէ դեռ: Խորհրդի անդամ Հայկակ Արշամյանը՝ դիմելով խորհրդի նախագահին, ասաց, որ կրկին նույն բանն է կատարվում ինչպես նախորդ հարցերի դեպքում և լքեց նիստերի դահլիճը: Խորհրդի անդամ Դավիթ Ափոյանն իր մտահոգությունը հայտնեց առ այն, որ ԵՊՀ պրոռեկտորի ելույթի ժամանակ նիստերի դահլիճը լքելը վիրավորական է, հատկապես այն դեպքում, երբ քննարկվում է նոր կենտրոն ստեղծելու հարցը: Ծրագրի հետ կապված Դավիթ Ափոյանը հարցրեց, թե ինչ ընդհանրություններ ունի ներկայացվող ծրագիրը ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հետ: Ռաֆայել Բարխուդարյանը պատասխանեց, որ բավականին շատ ընդհանրություններ կան ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հետ, բայց միևնույն ժամանակ ասաց, որ ինչպես նշեց Գևորգ Մուրադյանը, այս ծրագրում պետք է անպայման ներառվեն բիզնեսում կայացած և հեղինակություն ունեցող մարդիկ, իսկ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի լավագույն կադրերը պետք է ներառվեն բիզնես դպրոցի ծրագրի մեջ: Խորհրդի անդամ Դավիթ Ափոյանը հարցրեց, իսկ ինչն է խանգարում, որպեսզի մենք այդ բիզնեսում կայացած և հեղինակության ունեցող մարդկանց ներառենք տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դասավանդման գործընթացում: Ռաֆայել Բարխուդարյանը պատասխանեց,

որ դրանք տարբեր ծրագրեր են, քանի որ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը տալիս է ակադեմիական կրթություն՝ ապահովելով որոշակի գիտելիքներ, իսկ բիզնես դպրոցը կենտրոնանում է ուսանողների փորձի վրա: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը հարցրեց, եթե մենք հիմա խոսում ենք լրիվ առանձին կառուցվածքի մասին որպես բիզնես դպրոց, ապա ինչպես է լուծվելու ֆիզիկական տարածքի խնդիրը, ինչ քանակությամբ ուսանողների մասին է խոսք գնում: Ռաֆայել Բարխուդարյանը պատասխանեց, որ սկզբնական շրջանում նախատեսվում է այն կազմակերպել ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում, քանի որ այնտեղ հնարավորություն կա տրամադրել որոշակի լսարաններ, դասերը կազմակերպվելու են երեկոյանը ժամը 18:00-ից հետո: Պարզաբանումը ստանալուց հետո Խորհրդի նախագահը ԵՊՀ-ում բիզնես դպրոցի ստեղծման հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 18 ձայների հարաբերակցությամբ Խորհուրդը չհաստատեց Երևանի պետական համալսարանում ստեղծել «Երևանի պետական համալսարանի բիզնես դպրոց» գիտխորհրդի N6/4.1 որոշումը:

**3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունում փոփոխություններ:** Ներկայացնելով հարցը՝ Գեղամ Գևորգյանը նշեց, որ փոփոխություն պետք է կատարել հաշվի առնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) անվանափոխությունը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ): Խորհրդի անդամ Արթուր Վաղարշյանն առաջարկեց հետազայում տեխնիկական նման խնդիրներից խուսափելու համար ԿԳՄՄՆ-ի փոխարեն նշել ոլորտի կառավարման օրենքով սահմանված մարմին: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանն առաջարկեց, այնուամենայնիվ, հետազայում իրավական հակասություններից խուսափելու համար ընդունել ԿԳՄՄՆ-ի կողմից առաջարկված տարբերակը: Խորհրդի նախագահը ԵՊՀ հիմնադրամի կանոնադրությունում փոփոխություններ կատարելու հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

## Որոշվեց.

1. Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 15-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 15-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (հաստատված Հայաստանի հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն որոշմամբ) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«4. ԵՊՀ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին):»

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2020թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում: Անդրադառնալով այս հարցին՝ Գեղամ Գևորգյանն ասաց, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2020թ.



Ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը նախօրոք ուղարկվել է Խորհրդի անդամներին և հարցրեց խորհրդի անդամներին, կարիք կա այն ներկայացնելու, թե ոչ: Խորհրդի նախագահն առաջարկեց անցնել հարցեր և առաջարկություններին, եթե այդպիսիք կան: Հնչեցին հարցեր, որոնց վերաբերյալ Գեղամ Գևորգյանը ներկայացրեց պարզաբանումներ: Խորհրդի անդամ Արթուր Աթանեսյանն առաջարկեց ԵՊՀ անվտանգության ապահովման համար հետագայում փորձել ավելի շատ միջոցներ հատկացնել, քանի որ անվտանգությանը հատկացված միջոցներն անփոփոխ են մնացել: Գեղամ Գևորգյանը նշեց, որ անվտանգության ապահովման հետ կապված նա մի առաջարկ է արել գիտխորհրդում, ինչը շատ վատ է ընդունվել: Խոսքը վերաբերում էր ԵՊՀ ամբողջ տարածքում, այդ թվում՝ լսարաններում և միջանցքներում, տեսախցիկների տեղադրմանը: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ 2020թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվի տպագրված տարբերակում դեղին գույնով նշված գուտ շահույթի և գուտ վնասի տողեր կան որոնք որպես պարտավորություն չեն կարող հանդես գալ և 2020թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվի հաստատման հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գրիգորի Գևորգյանի զեկուցումը Երևանի պետական համալսարանի 2020 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվի վերաբերյալ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ռեկտորին 2020 թվականի ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվին համապատասխան:

**5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2020թ. հաստիքացուցակի հաստատում:** Այս հարցի հետ կապված Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը պարզաբանում կատարեց՝ նշելով, որ կա Խորհրդի որոշում՝ Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի լուծարման վերաբերյալ, որն այժմ դատական վիճարկման փուլում է: Այդ պատճառով կենտրոնը ներառված է լինելու հաստիքացուցակում՝ մինչև դատարանի որոշման ուժի մեջ մտնելը: Խորհրդի անդամ Դավիթ Ափոյանը հարցրեց, թե ինչու կենտրոնի հետ կապված այդ հարցը, որը Խորհրդի 12-րդ նիստում չէր ընդունվել, նորից դրվել է քվեարկության՝ հարցման կարգով: Նա նշեց, որ առնվազն Խորհրդի 8 անդամ անօրինական է համարել այդ գործընթացը, ապա խնդրեց պարզաբանել, թե ինչու պետք է Խորհրդի որոշ անդամներ իրենց ժամանակը կորցնեն դատարանում: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը պատասխանեց, որ եղել է հիմնավորում, թե 12-րդ նիստի և թե 13-րդ նիստի ժամանակ, ինչը կարող էր կամ բավարարել կամ չբավարարել Խորհրդի որոշ անդամների: Գևորգ Մուրադյանը ավելացրեց, որ Խորհրդի 12-րդ նիստի ժամանակ Հովհաննես Հովհաննիսյանը նշել է, որ Խորհրդի շատ անդամներ ներկա չեն, և վերջնական որոշում կայացնելու համար նորից ուսումնասիրություն է եղել: Ինչ վերաբերում է դատական նիստին մասնակցել կամ չմասնակցելուն, ապա ոչ ոքի չի պարտադրվում

ներկայանալ դատական նիստին, այլ եթե դուք ցանկություն ունեք մասնակցելու, ապա կարող եք գնալ: Ծավալվեց քննարկումներ: Խորհրդի անդամ Համազասպ Դանիելյանը՝ հորդորեց պահպանել օրակարգը, քանի որ մարդիկ նիստը դիտարկում են որպես հարթակ՝ ուրիշների ժամանակի հաշվին անելու պնդումներ և հայտարարություններ: Նա առաջարկեց կանոնակարգել և հերթագրել ելույթները: Ի պատասխան Դավիթ Ափոյանը պնդեց, որ Խորհրդի նիստի ժամանակ յուրաքանչյուր անդամ, ով ասելիք ունի ԵՊՀ-ի վերաբերյալ, իրավունք ունի արտահայտվելու՝ անկախ նրանից մյուսների ժամանակը ներում է, թե ոչ: Նա Համազասպ Դանիելյանին առաջարկեց ժամանակ չունենալու դեպքում դիմում գրել և դուրս գալ: Համազասպ Դանիելյանը որպես արձագանք ասաց, որ ԵՊՀ-ի համար ունի ժամանակ, սակայն դեմագոգիայի ժամանակ չունի: Խորհրդի անդամ Աղասի Թադևոսյանը նկատեց, որ Խորհրդի նիստերի ընթացքում երիտասարդ թևի՝ հատկապես Դավիթ Ափոյանի, կողմից բարձրացված հարցերը կարևոր են, սակայն նա շատ ագրեսիվ է խոսում, ինչը հաճելի չէ լսել և խնդրեց ուշադրության դարձնել դրա վրա, քանի որ կարելի է նույն բանը ասել շատ ավելի հանգիստ տոնով, ինչը շատ ավելի լավ կընկալվի: Խորհրդի անդամ Դավիթ Ափոյանը շնորհակալություն հայտնեց դիտողության համար և փորձեց հիմնավորել պատճառները: Կրկին ծավալվեց քննարկում: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը ԵՊՀ 2020թ. հաստիքացուցակի հաստատումը դրեց քվեարկության. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## Որոշվեց.

1. Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թ. օգոստոսի 20-ին կայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման՝ պահանջները, Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն՝ կառուցվածքային ստորաբաժանման 2019 թվականի հաստիքացուցակը թողնել անփոփոխ՝ մինչև դատարանի կողմից կայացված վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

6. **Ս.թ. դեկտեմբերի 24-ին ԵՊՀ-ում ուստիկանության գործելաճի քննարկում:** Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանն անդրադառնալով այս հարցին իր մտահոգությունները հայտնեց՝ նշելով, որ իր կարծիքով Խորհուրդը պետք է իր դիրքորոշումը հայտնի այս հարցի հետ կապված և ասաց, որ պատրաստել է հայտարարություն նախնական տեքստ: Գևորգ Մուրադյանը ներկայացրեց հայտարարության տեքստը, որից հետո ծավալվեց քննարկում: Գևորգ Մուրադյանը հայտարարության տեքստը հետևյալ բովանդակությամբ՝ «ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդն անընդունելի է համարում սույն թվականի դեկտեմբերի 24-ին ԵՊՀ տարածքում արձանագրված ՀՀ ուստիկանության գործելաճը: Ուստիկանության ծառայողը պարտավոր է հարգել մարդու ազատությունները, ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ, մինչդեռ միջադեպի ընթացքում ԵՊՀ ՈԻԽ նախագահ, Հոգաբարձուների խորհրդի անդամ Դավիթ Ափոյանի նկատմամբ կիրառված միջոցներն ակնհայտորեն ոչ անհրաժեշտ և ոչ չափավոր էին: Կոչ ենք անում հետագայում բացառել ոչ պատշաճ հիմնավորված գործողությունները և պահանջում ենք Ուստիկանության կողմից նշված դեպքի մանրամասն քննություն և

համարժեք գնահատական հնարավորինս սեղմ ժամկետում» դրեց քվեարկության. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**7. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգը վերամշակելու համար հանձնախմբի ստեղծում:** Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը նշեց, որ առաջարկում է ներառել բոլոր նրանց, ովքեր կցանկանան աշխատել այս հանձնախմբում: Հնչեցին կարծիքներ և արդյունքում որոշվեց ձևավորել հանձնախումբ հետևյալ կազմով՝ Դավիթ Ափոյան, Արթուր Վաղարշյան, Սմբատ Գոգյան, Հովհաննես Հովհաննիսյան և Գևորգ Մուրադյան: Խորհրդի նախագահը քվեարկության դրեց հանձնախմբի ստեղծումը նշված կազմով. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով, 45-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 2-րդ ենթակետով, 2.5 կետի 3-րդ ենթակետով՝ ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգը վերամշակելու համար ստեղծել հանձնախումբ հետևյալ կազմով՝ Դավիթ Ափոյան, Արթուր Վաղարշյան, Սմբատ Գոգյան, Հովհաննես Հովհաննիսյան և Գևորգ Մուրադյան:

**8. Ընթացիկ հարցեր:** Գեղամ Գևորգյանն ընթացիկ հարցերի շրջանակում առաջարկեց փոփոխություն կատարել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրման կարգում՝ նշելով, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով նշվում է, որ տնօրենն ընտրվում է, իսկ ըստ ԵՊՀ կանոնադրության՝ նշանակում է ռեկտորը: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը նշեց, որ կան որոշակի խնդիրներ, որոնք կարիք ունեն պարզաբանման, որից հետո այդ տեխնիկական մասը հարցման կարգով կուղարկվի Խորհրդի անդամներին: Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանն անդրադարձավ իրականացված աուդիտին՝ մտահոգություն հայտնելով, որ այն զարգացման որևէ առաջարկ չի ներկայացնում: Նա առաջարկեց հաջորդ անգամ ոչ միայն ֆինանսական, այլև բովանդակային աուդիտ իրականացնել: Բացի դրանից՝ Գևորգ Մուրադյանն առաջարկեց հետագայում աշխատավարձերի ձևավորման վերաբերյալ կազմել և սահմանել չափորոշիչներ:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքը և նիստը հայտարարեց փակված:

**Խորհրդի նախագահ՝**

**Գ. Մուրադյան**

**Խորհրդի քարտուղար՝**

**Գ. Հայրապետյան**